ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/27» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 06 » « դեկտեմբերի » 2021թ.**

ժամը 09:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Սինանյան

Հանձնաժողովի անդամներ՝

Մ.Այդինյան

Գ.Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Զոհրաբյան

1. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/27» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացրած հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ տեղեկություններ

1.1. «Տեխնոֆորում» ՍՊ, «Ինոթեք» ՍՊ և «Սուրաչ» ՍՊ ընկերությունները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունը՝ ներկայացրել է հրավերի պահանջներին համապատասխան՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը շտկված:

1.2. «Կոմպասս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը՝ ներկայացրել է հրավերի պահանջներին համապատասխան՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը շտկված և Հավելված N 1.2-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2. Հանձնաժողովը որոշեց՝

(Լ.Սինանյան)

2.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/27» ծածկագրով մրցույթի՝ չափաբաժին 2-ով հաղթող ճանաչել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 6, 12-ով՝ «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 4, 9-ով՝ «Կոմպասս» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 3, 5, 8, 10-ով՝ «Տեխնոֆորում» ՍՊԸ-ին, չափաբաժին 16-ով՝ «Վանդեկոր» ՍՊԸ-ին, չափաբաժին 11-ով՝ «Բարսիս» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 14, 15-ով՝ Սվետան» ՍՊԸ-ին, չափաբաժին 17-ով՝ «Մեգաօֆիս» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 7, 13-ով՝ «Ինոթեք» ՍՊԸ-ին, չափաբաժին 19-ով՝ «Սուրաչ» ՍՊԸ-ին:

2.2. Պայմանագրի կնքման նպատակով «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/27» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին անգործության ժամկետի ավարտից հետո՝ ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի կամ կանխիկ փողի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով, որը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ և որակավորման ապահովման տուժանքի կամ կանխիկ փողի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 15 տոկոսի չափով, որը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուից կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.5. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում՝ չափաբաժիններ՝ 2, 14, 15, 19-ի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝

_____ Լ.Սինանյան

Հանձնաժողովի անդամներ՝

_____ Մ.Այդինյան

_____ Գ.Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝

_____ Լ.Զոհրաբյան